ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, Հեռ. (094) 519030
, hatsavan.kotayk@mta.gov.am

N 91
13 ապրիլ 2018թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ
<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2018թվականի ապրիլի 10-ի N15-Ա որոշումը:
Առդիր՝ 1 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Թադևոսյան
Հեռ./093-212366/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 15-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջների,ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018թվականի ապրիլի 7-ի N 01/12.2/1566-18 գրության և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թվականի մարտի 29-ի N 29.6 [444295]-18 հանձնարարականի՝

որոշում եմ

1. <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում 2018թվականի ապրիլի 14-ին,մայիսի 12-ին,հունիսի 23-ին,օգոստոսի 25-ին և հոկտեմբերի 20-ին Հացավան համայնքում իրականացնել համայնքային շաբաթօրյակ:
2. Շաբաթօրյակի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ներգրավվել համայնքի բնակիչներին և համայնքի տարածքում գործող բոլոր կազմակերպությունների հնարավորություններն ու միջոցները:
3. Հանձնարարել համայնքի տարածքում գործող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ղեկավարներին շաբաթօրյակի միջոցառումների շրջանակներում մաքրել,բարեկարգել իրենց կազմակերպության տարածքը և հարակից շրջակայքը:
4. Հանձնարարել Հացավանի համայնքապետարանի աշխատակազմին համապետական շաբաթօրյակի օրը կազմակերպություններին ապահովել անհրաժեշտ տեխնիկայով,գործիքներով և նյութերով:
5. Շաբաթօրյակի անցկացման և կատարման աշխատանքների ծանուցման և դրանց նկատմամբ հսկողության իրականացումը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Խաչատրյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. ապրիլի 10
գ.Հացավան